Կ Ա Ր Ծ Ի Ք

ԼԻԼԻԹ ՀԱՅԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ «ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՍԵՌԱԴԵՐԱՅԻՆ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԴԵՍՏՐՈՒԿՑԻԱՅԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՄԱՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ»

ԺԹ.00.03 «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ

Ժամանակակից հոգեբանական գիտակարգում դեռահասության տարիքային բնութագրին անդրադառնալիս, առաջին հերթին, շեշտադրվում է դեռահասի անձի հակասականությունը, իսկ դեռահասության տարիքային ամբողջ շրջափուլը ներկայացվում որպես անձի ճգնաժամային շրջափուլ: Դեռահասության հիմնախնդրին անդրադարձող հետազոտություններում շեշտադրվում է դեռահասության տարիքային շրջափուլին բնորոշ ամբիվալենտության հիմնախնդիրը, միաժամանակ նաև «ինքնավստահության ճգնաժամ»-ի առկայությունը: Դեռահասության ճգնաժամը բնութագրվում է իբրև «փոթորկի և գրոհի» շրջան: Դեռահասության տարիքային պարբերաշրջանի նկատմամբ նման հետաքրքրության հիմքերն ակնհայտ են՝ պայմանավորված դեռահասի անատոմիական կառուցվածքի փոփոխության, հորմոնալ փոփոխությունների և վերջիններիս ածանցյալ հոգեբանական նորագոյացությունների հետ, որոնք արտահայտվում են՝ ինչպես իմացական, այնպես և հուզական ու վարքային ակտիվության գործընթացներում: Մասնագիտական գրականության մեջ առկա են դեռահասության տարիքային շրջափուլի վերաբերյալ տարբեր մոտեցումներ: Հիմնախնդիրը, որի բացահայտմանն է լծվել սույն ատենախոսության հեղինակը՝ այն է՝ բազմակողմանի վերլուծության ենթարկել դեռահասության տարիքային շրջափուլի ճգնաժամը՝ կապված սեռահասունացման գործընթացի հետ, քանզի հիմնախնդրին կենսաբանական մոտեցման համաձայն՝ դեռահասության սկիզբը համընկնում է սեռական հասունացման հետ:

Սույն ատենախոսությունը բաղկացած է տեսական և փորձարարական մասերից՝ ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից, հավելվածներից: Ատենախոսության տեսական վերլուծությունները ներառում են հիմնախնդրին վերաբերող գիտական գրականության մեջ առկա մոտեցումները՝ դեռահասության տարիքային առանձնահատկությունների, հոգեֆիզիոլոգիական զարգացման ու հասունացման օրինաչափությունների, դերադիրքային վարքի, սոցիալական, մասնավորապես, սեռադերային սոցիալականացման ու սեռադերային նույնականացման հնարավոր աղճատման ու հոգեբանական հարմարման խնդիրների վերաբերյալ՝ իբրև տեսամեթոդական հենք, հենվելով հոգեբանության բնագավառում հսկայածավալ ավանդ ունեցող գիտնականների՝ Զ. Ֆրոյդի, Է. Էրիքսոնի, Լ. Ի. Բոժովիչի, Ս. Բեմի, Ս Խուդոյանի և այլոց հիմնախնդրի վերաբերյալ առաջադրված հիմնադրույթների ու հետազոտությունների արդյունքների վրա:

Ատենախոսի կողմից տեսական գրականության վերլուծությունը իրականացված է համապարփակ, կուռ ու տրամաբանական, ինչը հնարավորություն է ընձեռել նրան առաջադրել յուրատիպ ու ըստ էության, նորովի մոտեցում հիմնախնդրին, առաջադրելով կանխադրույթ այն մասին, որ դեռահասության տարիքում սեռադերային նույնականացման դեստրուկցիայի դրսևորման առանձնահատկություններից են՝ սեռին ոչ համարժեք դերային կարծրատիպերի դրսևորումները, հակառակ սեռին նույնացման միտումները, սեփական Ես-ի ընդունման աղճատումներն ու սոցիալական միջավայրում ադապտացիայի անբավարար մակարդակը: Վերջինիս ապացուցմանն է միտված եղել իրականացված հետազոտությունը ՀՕՖ-ի, Օրրան–ի, ՍՕՍ մանկական գյուղերի, Երևանի, Գյումրու, Վանաձորի համայնքային այլընտրանքային վերականգնողական կենտրոններում ու Երևան և Աբովյան քաղաքների մի շարք դպրոցներում՝ թվով 413 տղա և 413 աղջիկ դեռահասների ընտրանքով, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներ, ուսուցիչներ և հոգեբան-մանկավարժներ:

Դեռահասների ընտրանքը բաժանվել է ըստ տարիքային զարգացման փուլայնության՝ կազմելով երկու տարիքային խումբ՝ վաղ դեռահասության 12-14 և ուշ դեռահասության 15-17 տարեկան դեռահասների խմբերը:

Ողջ հետազոտությունը իրականացվել է հոգեբանության ոլորտում գիտական հետազոտություններին ներկայացվող պահանջներին համապատասխան՝ քառափուլ ստորակարգությամբ, ինչը հնարավորություն է ընձեռել ատենախոսին վեր հանել սեռադերային նույնականացման հարմարման համատեքստը, հետազոտել դեռահասների, ծնողների, ուսուցիչների և հոգեբան-մանկավարժների խմբերը, իսկ արդյունքները համադրել փորձարարական եղանակով ստացված մնացյալ տվյալների հետ:

Ատենախոսի կողմից ընտրված մեթոդները, որոնք դասակարգվել են երկու հիմնական խմբի՝ ուղղված սեռադերային նույնականացման դրսևորումների և սոցիալական հարմարման համատեքստի բացահայտմանը, հնարավորություն են տվել լիովին հավաքագրել համապատասխան տեղեկատվությունն ու ենթարկել վերլուծության:

Անհրաժեշտ է փաստել, որ սույն հետազոտության հաջողության գրավականը մասնավորապես մեթոդական ապարատի ճիշտ ընտրությունն է եղել (Ս. Կաշտանովա, Ֆ. Գուդինաֆ, Ս. Բեմ, Մ. Կուն, Յու. Ռեշետնյակի և Գ. Վասիլչենկոյի մշակմամբ Տ. Լիրիի հարցարան, Դեմբո-Ռուբինշտեյն և այլն), որոնք հնարավորություն են ընձեռել բացահայտել դեռահասների հարմարման համատեքստը, ինքնագնահատականի յուրատիպությունները, ախտորոշել եսակենտրոնություն-սոցիոկենտրոնությունը, նրանց վերաբերմունքը ծնողների հետ, դեռահասության տարիքում սեռադերային նույնականացման առանձնահատկությունները և որոշակի սեռային դերով պայմանավորված սեփական անձի ինքնաներկայացումը: Պրոյեկտիվ մեթոդիկաների կիրառմամբ հեղինակի կողմից բացահայտվել են տղամարդու և կնոջ սեռային նույնականացման վերաբերյալ դեռահասների պատկերացումները:

Ստացված բոլոր արդյունքները մշակվել և լրացվել են համապատասխան աղյուսակներում՝ ըստ սոցիալական դերերի, կանացիության, առնականության

չեզոք բնութագրականների, մշակվել կոնտենտ-վերլուծության միջոցով՝ հետևյալ չափանիշներով սոցիալական խմբեր՝ սեռ, տարիք, ազգություն, կրոնական պատկանելիություն, սոցիալական դերեր, գաղափարախոսություն՝ փիլիսոփայական, բարոյական, էթիկական, կրոնական բնույթի դատողություններ, անձի հետաքրքրություններ, անձի նպատակներ ու ձգտումներ, ինքնագնահատական, կանացիության բնութագրականներ, առնականության բնութագրականներ, սեռադերային առումով չեզոք բնութագրականներ:

Արդյունքների մշակման ընթացքում կարևորություն է տրվել նույնիսկ ինքնանկարագրման միջոցների հագեցվածության աստիճանին:

Հետազոտության բոլոր փուլերի ու արդյունքների պատկերը զետեղված են գծապատկերների, աղյուսակների տեսքով, ինչը առավել տեսողական է դարձնում իրականացված հետազոտության ողջ պատկերը:

Հավելվածներն ամփոփում են իրականացված աշխատանքի տվյալների և ձևաչափի ողջ համախումբը: Աշխատանքում կան նաև թերություններ, որոնք թեպետ չեն նվազեցնում սույն ատենախոսության գիտական արժեքը, բայց այնուամենայնիվ մեկնաբանման ու հիմնավորման կարիք ունեն:

Մասնավորապես՝

- Ատենախոսության մեջ լիարժեքորեն հիմնավորված չէ, թե որ տեսական հայացքների հիման վրա է կառուցվում դեռահասի սեռադերային նույնականացման դեստրուկցիայի գաղափարը:
- Ատենախոսն իր աշխատանքում զետեղել է դեռահասների նույնականացման գործընթացին ուղղված թրեյնինգային ծրագիր, որն, անշուշտ, ունի մեծ տեսագործնական նշանակություն: Այնուամենայնիվ, աշխատանքում պարզ չէ, թե արդյո՞ք ատենախոսն իրականացրել է հետազոտության մասնակիցների հետ այդ թրեյնինգային ծրագիրը, թե ոչ: Այս հարցը նույնպես մեկնաբանման կարիք ունի:

- Աշխատանքն ավելի կշահեր, եթե ներկայացվեին ժամանակակից հոգեբանական գիտակարգում տեղ գտած մեթոդական լուծումները դեռահասների սեռադերային նույնականացման դեստրուկցիայի շտկման նպատակով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Լիլիթ Հայկի Խաչատրյանի «Դեռահասների սեռադերային նույնականացման դեստրուկցիայի առանձնահատկությունները հոգեբանական հարմարման համատեքստում» վերնագրով ատենախոսությունը լիովին ավարտուն, ատենախոսությունների պահանջներին համապատասխանող գիտական հետազոտություն է՝ հիմնախնդրի ամբողջական բացահայտմամբ ու համապարփակ եզրակացություններով: Ատենախոսի կողմից հրատարակված աշխատանքներն ներառում են ատենախոսության բովանդակությունը: Ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման 7-րդ կետի պահանջներին և ԺԹ 00.03 «Սոցիալական հոգեբանություն» թվանիշին:

Պաշտոնական ընդդիմախոս

Հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Գայանե Հարությունյան

Գ. Հարությունյանի ստորագրությունը հաստատում եմ

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային

կենտրոնի գիտքարտուղար՝

Մ. Սարգսյան